

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՍՀԻՐԻ, Ապրիլի փոքր

ՄՈՒԴԱԹՈՒՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser  
à la Rédaction du journal PHAROS

Le Caire, rue Abdine  
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԾՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԵԿ անդամի համար տողը 3 ԴՐՁ. ողջ.

ՄԵԿ անդամ է առաջին ծանուցումներու համար  
մասնաւոր պայմաններ.

ՐԱԺԱՆՈՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ե. Գ. ԳՐԱԳՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան . . . . . ԴՐՁ. ողջ 100

Վեցամսեայ . . . . . » 53

Եռամսեայ . . . . . » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան . . . . . ԹՐ. 26

Վեցամսեայ . . . . . » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՂՁՈՒՄ

[ՈՒՆԻ ԴՐՈՒԹԻՒՆ]



# ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Զ. ԱԼՓԻՍԻ

## ՊԶՏԻԿ ԴԱՍԵՐ

### ՄԵԾ ՏՂԱՆԵՐՈՒ (\*)

«Ամբողջ այդ երկստարդներուն մէջ վնց հոգի լիար որ պատահաւոր մը գործածելու եղանակը գիտնաւ»:

Մեր հասարակութեան զարգացման աստիճանը ցոյց տալու համար էր որ հազարաւորներու մէջէն այդ օրինակը զատած էինք, ինչ որ կ'երեւի թէ շատերու վրայ գէշ տպաւորութիւն մը թողոցեր է, այն ամեն ճշմարտութիւններու պէս որոնք ուղղակի մարդու սրտին կը դպին:

Երեւոյթը գեղեցիկ է և արդիւնքը օգտակար:

Եթէ միայն պատահաւորի գործածութիւնը ըլլար մեր թերի կողմը, ո՛հ, ատանկ երկայն խմբագրականներու պէտք չպիտի գգայինք և մենք մեզի չպիտի կերցնէինք ՏԱՏԱԻ դերը կատարած ըլլալու համար:

Կենցաղագիտութեան պակասը այնքան աշխատակ, այնքան տղիզ կերպով ի յայտ կուգայ մեր ազգին մէջ, որ այդ աշխարհիկ ուսմունքին առջեւ սկսելու էինք, եթէ դիտաւորութիւնն ըլլար գաղափար մը յօրինել ի պէտս... Խոշոր տղայոց, Այն յարեանց, խաբող, թեթեւ վերջով մը ծածկուած, անհիմն, կեղծ քաղաքավարութիւնը որմէ ամենքս ալ ունինք բնէ շատ, չփութելու չէ կենցաղագիտութեան հետ որոնց երկուքին մէջ այն տարբերութիւնը կայ ինչ որ կայ պարզ թուաբանութեան և գրահաշիւին միջև:

Կենցաղագիտութեան առաջին պայմաններն են ունենալ զգացումներ, որոնք բարձրութիւն մը, ազնիւ զգայնոտութիւն մը, դիմացիներն հաճելի և օգտակար ըլլալու փութիւնութիւն մը, ծածկել գիտնալ կերբերը, չի տեսնելու զարնել ուրիշին պակասը տկարութիւնը, երեսին չի աւալ ինչ որ հաճելի չենք գտներ իր վրայ և այս ամենը փափկութեամբ, աղնուաբար, անզգալապէս, ահա՛ որոնք են հիմքերը որոնք վրայ գրուած է կենցաղագիտութիւնը որ ֆրանսերէնէն ալ, բիանոէն ալ աւելի անհրաժեշտ

(\*) Տես «Փարոս» թիւ 31:

է կեանքի պայքարը վայելչօրէն մը դիմելու և տմարդի չերենալու համար ընկերութեան (société) մէջ որու մուտքը կարծուածին չափ դիւրին չէ:

Մեր մէջ հարուստները, բարձր կարծուած դասուն պատկանողները, թերեւ ամենէն կոշտ հայերն են, ուրովհետեւ անոնք կը կարծեն թէ դրամը ամեն ինչ ներքի կ'ընէ իրենց և աւելի կ'ընեն ծածկել իրենց ամեն պակասութիւնները:

Դրամը հակառակ իր ամենակարողութեան երկու բանի մէջ իր զօրութիւնը կը կորսնցնէ. մէյմը չերջանկացնէր դմարդ, երկրորդ՝ չաղնուցներ կ'իյլօն:

Հարկը հազար ոսկի ունեցող կ'իյլօնէր շատ մեր մէջ...

Եւ ես դիտած եմ որ այդ ջոշերու աշխարհին մէջ ամենէն շատ քաղաքավար երեցողները ամենէն շատ զրկուածներն են կենցաղագիտութեան չնորհէն: Եւ ասոնք ամենէն շատ պէտք ունին կենցաղագիտութեան դասընթացքի մը հետեւելու:

Շատ անգամ պատահած է մեզի՝ օրագրողներու, որ առիթը կը ներկայանայ երկու փաղաքուշ խօսքեր գրել այս կամ այն անձաւորութեան վրայ իր մէկ արարքին վերաբերմամբ:

Եւ ասիկայ կ'ընենք լրագրական պարտականութիւն մը կատարած ըլլալու մտքը, առանց որեւէ շահու աւելակութեան, առանց նոյն իսկ բարոյական վտրձաւորութիւն մը սպասելու: Եւ ստէպ կը պատահի որ նոյն իսկ գէթերներն չենք տեսած մեր դոված անձնաւորութիւններուն:

Եւ երբ ձեզ ըսեմ թէ հարկերն ինքնուրուր այդ անբաններուն մըտքերնուն չեն անցուցած վասն շնորհակալութեան այցեւորում մը զրկել թերթին խմբագրութեան իրեն նշանակամբ յայտնուած փաղաքուշ զգացումներուն համար:

Մինչդեռ այդպէս չէ օտարներու մէջ: Երբ անոնք իրենց անունը պըզտիկ complimentով մը յիշատակուած կը տեսնեն որեւէ թերթի մը մէջ, միւս օր p. r. ով քայքայում մը կը զրկեն խմբագրին և կամ թերթին տնօրէնին:

Փառք Աստուծոյ, եթէ մեր դարակ-

ները պրպտներ, թերեւ քանի մը հասարակութիւն գտնենք, որոնց վրայ եւրոպացիի անուններ փորագրուած են, բայց երբէք հայու մը:

Եւ ըսել թէ քանի՛ քանիներու այդ օրինակ ծառայութիւններ մատուցած ենք մեր հրապարակագրի կեանքին մէջ:

Մեր փնտառը ոչ դրամ է և ոչ ալ ունէ ընծայ, այլ պարզապէս թըղթի կտոր մը որ պիտի չըլլայ նէ ալ կ'ըլլայ:

Քաղաքավարութեան դէմ քաղաքավարութիւն, շատ պահանջել է:

Այն կենցաղագիտութեան պակաս չէ՛ ճէ, ինչ է: Պիտի առարկէք թէ գացեր եկեր և ուղղակի մեզի հետ առնչութիւն ունեցող և կամ մեր ջիշերու դպչող իրողութեան մը վրայ կը ծանրանանք կոր:

Դուք ալ իրաւունք ունիք: Ամեն մարդ իր կարապետը կուլայ, չէ՛, Զ. Ա.

## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԵՐԵՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր մէջ շատ քիչեր, թերեւ ոչ ոք մը տածած է թէ մանուկները, որոնց ամբողջ գործունէութիւնը և դատողութիւնը մեզի համար երեկայական աշխարհի մը մէջ կը դառնայ, սէտք ունին առաջնորդներու՝ որոնք մանուկին համար կ'ապր պիտի ստեղծեն երեւակայական և իրական աշխարհները իրարու յօդող: Թէև մանկան մը առաջին տարիները հոգոյ գերազանցապէս երեկայական գործունէութեան մը մէջ կ'անցնին, սակայն մայր մը, կամ մօրը տեղ բռնող վարժուհին սէտք չէ չափազանց սնունդ տան մանուկին երեւակայական հակումներուն: Մանկան արդէն երեւակայութեան հակամէտ բնաւորութիւնը երբ ուզուէր աւելի երեակայութիւններով սնուցանել, ասիկա պիտի նմանէր ճիշդ դիւրադրելու և արիւնտ տղու մը ամեն տեսակ համեմտութիւնով ուժոված սնունդ մը տալուն, որուն հետեանքը երկու պարագաներուն աւելցումը համարմիայն փաստաւոր կ'ըլլայ: Այն տղան որ արդէն բնութիւնէն ունի իրեն անհրաժեշտ եղած երեակայութիւններ, որոնք հակում մը, պէտք չի կայ նոր առիթ տալ տղուն երեակայութիւնը գործունէութեան մէջ դնելու: Նպատակով: Ընդհակառակը պէտք է աշխատել, երեակայականներն իրականները հետեւեցնելով, մանկան դատողութիւնը զարգացնել:

Մանկան հոգեկան աշխարհը հերթաբարեւոյ աշխարհ մըն է. աշխարհի բոլոր երե-

ւոյթները տղուն համար հրաշալիքներ ու հերթաբարեւոյ են, որովհետեւ չի ճանչնար այդ բոլոր երեկայութիւններ իրական ըլլալը և անոնց պատճառները կ'անգիտանայ, ու միայն կամաց կամաց կը սկսի իր երեակայութեան աշխարհէն դուրս գտնուած առարկաներու երեկայութիւններ իրական գոյութեանը պիտակցել: Այս տեսակ դիտակցութեան մը վերջ է միայն որ մանուկը կը սկսի շահագրգռուիլ այդ առարկաներով, որոնք իրեն համար հաճելի կամ անհաճոյ կը սկսին դառնալ:

Մանկան երեակայելու ձգտումին մօր կողմէ չափազանց քաջալերելովը աղուն դատաւան զարգացումը, իրականին ճանաչողութիւնը, մտածելու և դատելու կարողութիւնները կը փաստին, և յառաջիկային իրականին աւելի յոյզերու կեանք մը կու տան անոր, ինչ որ զինքը կ'արգիլէ կեանքի կողմէն մէջ յաղագիւլ:

Մանուկները իրենց մտաւորական զարգացման օղակներուն մէջ կը նմանին ժողովուրդներու, որոնք քաղաքակրթութեան ծագման միջոցին արտաքին բոլոր երեկայութեան բարեփոխական տպաւորութիւն մը կը ստանան ու նոյն տպաւորութիւնները բանաստեղծական կերպով կ'արտայայտեն: Ասոր համար է որ բոլոր լեզուներուն նախնական վիճակը բանաստեղծութիւն է: Նմանապէս տղան ալ, ինչ որ իր արտաքին տպաւորութիւն կը ստանան կամ կ'արտայայտեն բնագործին քանաստեղծական է: Երբեք մանուկը իր զգացումներն ու մտապատկերները միայն պատկերներով կ'արտայայտէ, որովհետեւ միայն պատկերներու միջոցաւ է որ կը հասկնայ այդ ամենը: Մանուկ մը իր առաջին երեք շաբաթ տարիներուն ուրիշ կերպով չըմբռնէր բարին կամ չարը, գեղեցիկը կամ տգեղը, բայց եթէ պատկերներու միջոցաւ, ու երբ իր մայրը չարին կամ գեղեցիկին մասին խօսի, միշտ միայն կը բերէ այդ գաղափարներու համապատասխանող պատկերները, ու կը սկսի իրեն համար այդ պատկերներէն յառաջ եկող նոր պատկերներ երեակայել:

Մանկական հոգին այս բնական վիճակը՝ մանուկներու հետ մեր ամենօրեայ փորձառութեան կը տեսնենք, երբ անոնք այնքան ուշադրութեամբ, զրեթ իրենց շունչը զգուշութեամբ առնելով, կը հետեւին մեր պատմութիւններուն, և որոնք եթէ լեզու ենին, առաջին անգամ մենք կը խնդրենք որ իրենց պատմութիւն մը ըսենք: Բայց եթէ չափէն աւելի գգուենք մանկան այս հակումը, այն ատեն, պէտք է գիտնալ որ խնդրած կ'ըլլանք տղուն խառնուածքին առողջութիւնը:

Մեր մայրերը, զրեթ ամենքն ալ ընդհանուր սխալ մը ունին, որով իրենց նորա-

## Խ. Տ Ե Մ Ի Ր Ձ Ե Ա Ն

ԱՅԱՍՏՆԱՔՈՅԾ

ԲԵՍՄԵԼ ՓՈՂՈՑ ԹԻԻ 3 ՕՐԵԼ ՇԷՓԸՐՏՈՒ ԴԻՄԱՑ

Երեւոյթական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակույթի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ակուաներու, ճանթիւներու ոսկիէ, պիւլմոնիտէ, ֆուրյու է: Ապահով և առողջ քոյրուկներ ոսկի, բլաթին, կալին, կայն: Լինտերու հիւանդութեանց դարմանում երեւոյթական և ուրիշ միջոցներով:



տի դաւակայքը երեւակայութիւնը պէտք է զածէն աւելի վառ կը պահեն, ու չափ ու սահման չեն գիտեր, երբ սկսին իրենց մանկեանքէն հեռացնելու պատժել: Կը պիտակցին արդեօք, թէ ատով իրենց դաւակնութիւնը ընտանեկան տէր, վախկոտ ու ձեռներէցութեան ոգիին զուրկ անհատներ կը դառնան ապագային, բան մը ուրիշ այնքան կը տառապի հիմա մեր հասարակութիւնը: Գլխաւորաբար հարուստ ընտանիքներու մէջ, ուր տղան ինքնաբերական համար ճշմարտեմբեր կը գտնուի և մանուկները զրեթէ ամբողջովին անոնց յանձնուած են, այս վերջինները այնքան երեւակայական պատմութիւններով կը անուցանեն մանկան միտքն ու հոգին, որ անիկայ իր ապագայ կեանքին մէջ անկարող մէկը կը դառնայ ընդհանրապէս. զուրկ զործունեայ մարդու մը բոլոր առաւելութիւններէն: Երեւակայութեամբ չափազանց սնած հոգիին մը ազդեց կ'երեսին հասարակ օրուան լոյսին առի վաղիւրոյ իրականութիւնները, ինչ որ պէտք է հաւատալ թէ ընկերական շարքը մըն է. իրաւ է, պէտք է մեր տղաները զրեթէ երեւակայական պատմութիւններու առթամ անպատում ուրախութիւններէն, որոնք մանկական հոգիին համեմեմ են: Ինչպէս որ համեմեմներու չափազանց զործունեութիւնը մեր ամեն օրուան կերակուրներուն մէջ մեր ֆիզիքական առողջութեան կրնայ վնասել, նմանապէս հեռացնելու չափազանց սնուող մը կը վնասէ մանկական հոգեկան առողջութեանը: Տղան արդէն ինքնութեան ունի երեւակայեալ կարողութիւնը, և նոյն իսկ այդ երեւակայութիւնը արտաքին, իրական աշխարհին հետ ներդաշնակելու մէջ կը կայանայ մօր մը դաստիարակչի վերջը:

Տղայ մը պէտք է որ ուսման իրենց, հրաշքներու աշխարհին մը մէջ ապրի, որ իրական աշխարհի մտապատկերներով չի բացարարուի: Բնութիւնը, իր բոլոր երեւոյթներով արդէն մեծկակ հրաշք մըն է մանկական հոգիին ու միտքին համար, և մեր զործող պիտի ըլլայ կամայ կամաց պարզել այդ բոլորը մանկական աչքին, փոխանակ անոր միտքը նոր հրաշքներով բնաւարտելու:

Այնքան լաւ միջոցն է, որ տղաները իրենցմէ զուրկ գտնուած ամեն անցած դարձածները հասկնալու համար, անշուշտ առարկաներն այն տեսակ յատկութիւնները տանան, որոնցմով մանուկը զինքը շրջապատողները, իր ծնողքը երեւակայէ: Կենդանիները և ծառերը պէտք է որ մանկան իր մօր լեզուով խօսին: Գրականութիւններու մէջ առաւել մեծի այս միջոցները կուտայ: Առաւելու. միջոցաւ է որ արդէն 4—5

տարեկան եղող տղաներուն կրնանք խօսիլ բարի ու չար զործերու վրայ. իրականութեան մասին իրենց ըմբռնումը կը թել, և զիրենց արտաքին աշխարհին հետ յարաբերութեան մէջ գնել:

Մայրերը որոշ ուղղութիւն մը պէտք է ունենան իրենց դաւակայքը երեւակայական համեմեմներէն օգտուելով զիրենց կրթելու համար: Մայրերը պէտք է որ ներքին հոգեկան, արտաքին նիւթական խնդիրներով զբաղեցնեն իրենց դաւակայքը հոգին և միտքը: Պէտք է աշխատիլ որ մանուկներու մէջ իրականութեան դատողութիւնը ու երեւակայելու կարողութիւնը, ձեռք ձեռքի, միասին զարգանան:

Բնախնայող պատանիները և զգայալիւ աղջիկները, որոնք բաղձաւաճէն շատ աւելի են մեր մէջ, հետաւոր են հեռացնելու միտքն սնած մանկութեան մը:

Մ. Շ.

## Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Աղերսանդրիայէն առած մեր տեղեկութիւններուն համաձայն, Գեր. Այվազեան Եպիսկոպոսի հիւանդութիւնը երկու օրէ ի վեր նուազ մտահոգութիւն կը պատճառէ իր շուրջը գտնուողներուն:

— Գաղաքիս Լսարան—Ընթերցատան վարչութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ վաղը կիրակի, առաւօտեան ժամը 10<sup>1</sup>/<sub>2</sub> ին, Լսարանահան համախումբում մը տեղի պիտի ունենայ Լսարանի սրահին մէջ ուր պիտի ասանախօսեն Տօբթ. Կ. Ուղունեան և Տիար Զարեհ Գոչեան:

ՀԱՅ ԿԵՆՆՔԸ

Մթնոսեան Երևանի և Սիկարէթներու Անտոն Ընկերութեան վարչներէն Տիրան Էֆ. Փիլիպպոսեան և ընտանիքը՝ չորեքշաբթի օր թաղաք վերադարձան Եւրոպայէ ուր անցուցած էին ամբողջ ամառուան եղանակը:

## Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն Բ Ե Մ Ը

Այս վերնալոկին տակ կը հրատարակուին անհատներու կողմէ մեզ հասած նամակները որոնք իրենց պատշաճութեամբ հանրային օգտուող կը չարտին և որոնց մէջ լրացութեան և պատշաճութեան օրէնքները յարգուած են:

զուրկելի ըլլալ սկսած էր պալատին գերուհիներուն և կիներուն նկատմամբ, յորմէ հետէ դատարանական իրեն առաջնորդ ունեցած էր, իր ճաշկները նրբացած էին, իր մէջ եղած իրական բնածին պարկեշտութիւնը արթնցած էր: Դատարանը հասկցած էր անցեալ սերերուն և հանգիստներուն ու նախնիները և ապականութիւնը. ու իր սովորական անկեղծութեամբ չէր քաշուեր պարսաւելու և դատապարտելու ինչ որ անոք իր վիճակին մէկ բնական հետեանքը կը թուէր իրեն:

Նոյն ինքն հանձնը երբեք երբեք կը վրդովէր տասնվեց տարեկան այդ աղջկանը նայուածքին տակ, որ իր կեցողացիին հանդարտութեամբ կարծես կը դատէր զինքը, կը դատապարտէր այն բաները զոր ինքը կը համարձակէր թողաւորել, այն անսաճ,

Խորագրով իւր ուրիշ պատասխանատուութիւն մը շտապեցնէր այս կարգի հրատարակութեանը համար:

... Խմբագրութիւն

«Փարոս» լրագրի

Գահիրէ

Տէր Խմբագրապետ,

«Փարոս» ի վերջին հինգշաբթի օրուան թիւին մէջ հրատարակած էիք թէ Պատ. Թաղ. Խորհուրդը բարոյագրութեան պաշտօնէս հրաժարեցուցած է զիս:

Ձեր հաղորդած այդ տեղեկութիւնը արժանաւոր սխալ է: Ոչ միայն Թաղ. Խորհուրդը զիս չէ հրաժարեցուցած, այլև ոչ իսկ անուղղակի կերպով ներշնչած է ինձի հրաժարիլ: Ես բոլորովին ինքնաբերաբար, իմ ազատ կամքով և պաշտօնիս հետ առնչութիւն չունեցող պատճառներով հարկ սեպեցի հրաժարիլ. այս մասին եթէ տաքախոսողներ կը գտնուին՝ կարող են ճշմարտութեան տեղեկանալ Պատ. Թաղ. Խորհուրդի վրէժով: Առնանալու Բաշայէն:

Խնդրելով որ հաճիք ներկայ հիւրընկալել «Փարոս» ի յառաջիկայ թիւին մէջ և կանխապէս յայտնելով շնորհակալեաց,

Միամ յարգանքով:

ԼԵՒՈՆ ՄԻԿՏԻՉԵԱՆ

Աղբ. 27 Դեկտ. 1904

## ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԾԽԱՐՅԵՆ

ՍԵՐՊԻՍ ԵՒ ԹՈՒՐԻԲԻՍ. — Սերպիական կառավարութիւնը բողոք բարձաւ Բ. Դրան դէմ թէ սահմանադրութիւն թուրք իշխանութիւնները փորձէր են սերպիական թղթատարին պաշտօնակներ բանալու թղթատարները ստիպուեցան դիմադրել թուրք զործակալներուն և Պէկրատ վերադառնալ: Սերպիական կառավարութիւնը մտադիր է խնդրելու որ ետ կանչեն թուրքական զեւպանը որմէ կը կասկածի թէ այս առթիւ հրամաններ տուած է թուրք զործակալներուն: Կը կարծուի թէ Սերպիական պիտի ծանուցանէ Դրան թէ ինքն ալ նոյն կերպով պիտի շարժի:

ԹՈՒՐԻԲԻՍ ՀԱՆՔԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ. — Համիմատ զեկուցադրով մը զոր Անգլիոյ օրինակին հետեւելով Բ. Դրան ներկայացուցեցաւ զեկու. 18ին, Դեսպանատնները զիտողութիւններ կընեն հանգիստ վրայ դրուած նոր օրէնքին երրորդ յօդուածին առթիւ որ խուզարկութիւններուն արտօնութեան կը վերաբերի: Կը յայտարարեն թէ այդ յօդուածին ոգին վնասակար է արդի

ուպերզան ազատութիւնները զոր իր պատժապարտ թուութեամբը թող կուտար որ կատարուին իրեն շուրջը. ասիկա զատ վրտանդաւոր կը համարէր զայն Ժեմէլիի նըկատմամբ, որուն հետ շատ աղէկ էր, այնչափ աղէկ՝ որ հարկաւ զանի շրջապատող զձեռն վատութիւններուն վրայ հարկաւ տեղեկութիւն կուտար անոր, և այնչափ անձնուէր անոր՝ որ անտարակոյս կը զգուշացնէր զանի այն բազմադիմի վտանգներուն դէմ որ կրնային անոր պատահիլ: Այս ամենը նկատողութեան առնելով փրկութեան ճշմարիտ զգացում մը կրեց՝ երբ մօտեցած տեսաւ այն վայրկեանը յորմէ պիտի վերային նետեր իր պաշտպանեալը, այն աղջիկը որուն ժամանակաւ կը շուրջէր կը մընար թէ ինչ կերպէն ինչ խմբուէր:

Եւ սակայն հանձնը չարապիտ չէր. երբ

արտօնաւորներուն, չի քաշալերը նոր խնդրանքները և չի համապատասխանի կայսրութեան շահերուն որոնց կարեւոր ազդեցութիւն է հանքի հարստութիւնը: Դեսպանատնները արամարանական և ընդունելի կարգադրութիւն մը կը պահանջեն:

ՁԵՆՈՎԻԷՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ. — «Թայմս» ի Կ. Պոլսոյ թղթակիցը կը գրէ իր թերթին թէ Ռուսիոյ զեւպան Պ. Չենովիէֆ մեծ եպարգոսին հետ ունեցած տեսակցութեան մը միջոցին ուժգնօրէն բնանադատեց Մակեդոնիոյ և Հայաստանի կացութիւնը և ըսաւ թէ ասիկա ամօթալի է օսմանեան կայսրութեան համար:

ԳՈՆՍՏԱՆԻ ԶԵՆՈՒ ԲԵՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ. — Շատ աչքի կը զարնէ քաղաքավարութիւնը և փորթիտութիւնը զորս Բ. Դրան և Պալատը ցոյց կուտան ֆրանսական զեւպանատան հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ: Պ. Գոնսթան Կ. Պոլսի վերադառնալին ի վեր խնդրեց մեծ եպարգոսին որ օսմանեան ծառայութեան մէջ գտնուող սէկ բանի ֆրանսացիներու յետաձգուած ամսականները և մէկ քանի ֆրանսացի զաշտօնատարներու այրիներուն չի վճարուած թոշակները կարգադրէ: Դեսպանին խնդրքը անմիջապէս կատարուեցաւ:

Պ. Գոնսթան շատ զոհ է այն եղանակին որով զործերը կընկան և Սուլթանին ազնուութեանն որուն ահա նոր ապացոյց մըն ալ: Պ. Գոնսթան խնդրել առած էր Սուլթանէն որ հրաման տայ «Վօթուր» ին քանի մը նաւատիններուն ներկայ գտնուելու Սկւադրէի արարողութեան զոր զեւ չէին տեսած: Ապա Սուլթանը Զամիտ պատասխանեց թէ շնորհակալ է Պ. Գոնսթանի այս խնդրանքին համար զոր համակրանքի նշան մը կը համարի և թէ ուրախ պիտի ըլլայ յառաջիկայ սկսածըին ներկայ տեսնել Պրանցիի նաւագնի: Հեռաւարտ «Վօթուր» ի նաւագնեքն քառասուն հատ, սպայի մը հրամանատարութեամբ, անցեալ ուրբաթ օր Երլազ գացին:

ՌՈՒՍԻՆ Զարն ու Զարուհին իրենց չորս աղջիկներով մեկնեցան Զարսուէ Սէլօն ուր սովորութիւն ունէին մինչև Նոր Ծարին օրը կենալ, ժանտատենդային շերտի մը պատճառաւ որ երեսն եկած է այդ տեղւոյն մէջ որ սակայն իր աղէկ օդին և ջուրին համար անուանի է: Վէհապետները կաթիլեալ գացին ուր կը գտնուի մայր կայսրուհին:

Կ. ՊՈԼՍԸ Հասած տեղեկութիւններու համաձայն կառավարական ներկայ ձեւին դէմ դաւադրութեան ամբաստանութեամբ

բնի երբեք իր ծագումը յիշելով, մայրախնամ ցոյց կուտար ինքզինքը, խնարհեցուն արտօնեցները մտիկ կ'ընէր, և զանոնք միմեկին իրեն նուազութիւն չէր համարեր. բայց ամեն բանէ առաջ արեւելքի էր, այսինքն բաճաճ և յարափոփոխ, ընդունակ վեհանախական խաղաղապետութեանց, որոնց յանկարծ կը յաշորկէր նախընթաց օրը ամենէն աւելի նախապիտան կաններուն նկատմամբ անտարբերութիւն:

Սթա Ապուհա Ժեմէլիէն աւելի փորձառու ըլլալով՝ անմիջապէս կացութիւնը հասկըցած էր: Առաջոց գիտէր թէ իր տիրութիւն անդառնալի որոշման հանգիստ՝ դատարանական իր աղաչանքները և անզօր պաշտպանութիւնը ազդեցութիւն չպիտի ունենային: Միայն Մուրատ կրնար զինքը ազատել: Եթէ ան Ժեմէլիին ըրած խոստումը մոռցած էր, կորուսած էր ինքը:

# Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱՆՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԵԻԲԻՅԷ — ԳԼԽԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԻԻԵԻ ԵՒՆԻԲԸ



վերջերս ձերբակալուած անձերուն մէջ կը գտնուի խոստացիլ Բելալ պէյի որդիներէն Մահմուտ պէյ:

Մահմուտ պէյ և ձերբակալուողներէն 70 հոգի Եւթմէնի մէջ աքսորի դատապարտուեցան: Սուլթանին հրամանով Մահմուտէի վարչութիւնը փոխադրանաւ մը պատրաստեց որ բոլոր աքսորեալները Հոսէյաթ պիտի տանի:

## Տ Ե Ղ Ա Ն Ա Ն

Ն. Բ. Խտիվը, չորեքշաբթի առաւօտ Մոնթազան Էտիքիան մեկնեցաւ ուր մնաց հինգշաբթի օրը: Նորին Բարձրութիւնը եւրկ Մարիութ գնաց ուր պիտի մնայ շաբաթ մը իր կալուածները քննելու համար:

Խտիվը յառաջիկայ չորեքշաբթի կամ հինգշաբթի միայն պիտի վերադառնայ Գաւհրէ:

— Ն. Բ. Խտիվին զահակալութեան տալիս զորքը անհետ կամար կազմուած զորք մը պիտի յանձնախօսուի երկու օրէ ի վեր սկսած է իր պատրաստութիւնները: Օրէքայ յի հրապարակին վրայ և Ապտին փողոցին երկու կողմը դրօշակները արդէն ցցուած են: Գալ շաբաթ պիտի սկսին Էդուէրէի պարտէզը զարդարելու և լուսաւորելու աշխատութիւնները:

— Եգիպտոսի բժշկական առաջին քննիչին ընդհանուր քարտուղարը չորեքշաբթի օրուան արաբական թերթերուն մէջ հրատարակուած շրջաբերականով մը կը ծանուցանէ հետաքրքրուողներուն թէ յառաջիկայ կիրակի օր ցերեկուան ժամը 2ին, բժշկական զըզրոցին գրքատան մէջ տեղի պիտի ունենայ զործակիր յանձնաժողովի անդամներուն ընտրութիւնը:

— Վագֆներու ընդհանուր անօրէն Ապտէլ Հալիմ փաշա Ասլմ, Ն. Բ. Խտիվին ներկայացուց 1902ի համար այդ վարչութեան ելմական նախատեսութիւններուն և վագֆներուն մէջ յաջորդ տարի ներմուծուելիք բարեփոխութիւններուն ծանօթագիրը:

Այդ ծանուցացրին համեմատ գանձումներու գումարը վերջնականապէս որոշուած է 246,000 եգիպտական ոսկի և ծախքերը 209,362 ոսկի՝ ոսկից պիտի գոյանայ 36,638 ոսկի շահ մը:

— Պ. Թուէնին հինգշաբթի առաւօտ Ճէ.

նովալն մեկնեց Է. Ֆլորիօ Ռուպարթինօ ընկերութեան շտաբանով: Խտիվը դիմեալ գիտական գործակատար և ընդհանուր հիւպատոսը վաղը առաւօտ Աղեքսանդրիա պիտի հասնի:

— Արդարութեան նախարարութիւնը որոշած է Է. Խտիվ պէյ ի պարհիմը Գահրէի տեղական նախադատ ատենակից դատարար անուանել, Ֆուադ պէյ Կրէյսի տեղ որ Մանսուրի Խառն դատարարը փոխադրուած է:

— Ելմական նախարարութիւնը շրջաբերականով մը ծանուցած է միւտիքիթներուն ու կառավարչատնակներուն թէ ներքին մաքսատունները գտնուող պաշտօնեաները պիտի արձակուին Յունուար 1ին, հետեալքար կը հրաւիրուին ուր որ անկէ իրենց թոշակին կարգադրութեանը համար:

Շրջաբերականը կը յանձնարարէ միանշանակ Միւտիքիթներուն և Կառավարչներուն թէ Ներդոսի մէկ եզրէն միւսը անցնելու համար նաւարկութեան աւերքը ջնջուած է:

— Աղեքսանդրիոյ Մուհամմէտ Ալի արուեստից Դպրոցին հիմնարկութեան համար կատարուած հանգանակութիւններու գումարը կը բարձրանայ 3,363 ոսկի:

— Ոստիկանութիւնը չորեքշաբթի առաւօտ ժամը 11ին Մուսքի թաղին մէջ 14 սընտուկ խարդախուած կարգ բռնեց եւրոպացի վաճառականի մը պատկանող: Ապրանքը գրաւուեցաւ:

— Էլ Տահեր վիճակահանութեան մեծագոյն պարգիւ վաստակեցաւ Գահրէ բնակող ծաղկավաճառ Պ. Բուշէթի:

— Թառախիկայ ուրբաթ, յունուար 3ին երեկոյան ժամը 10ին, Օրէքայի խտիվական թատրոնին մէջ տեղի պիտի ունենայ Պ. Թուէնիի նախագահութեամբ դիմակաւոր և անդիմակ պարահանդէս մը Գահրէի խաղական բարեգործական ընկերութեան ի նպաստ:

Չորս պարգիւ պիտի տրուի ամենէն հաւուստ, ամենէն ինքնատիւ, ամենէն տաւրօրինակ և ամենէն երփնեւրանք տարազը կըրողներուն: Մուտքը պիտի արժէ 30 դահական ողջ:

— Դերձակ արհեստաւորներու գործադուլը կազմակերպողներէն մին, քանի մը օր առաջ Մանսուրա գացած է հոն տեղի գործաւորներն ալ զէպի դորձադուլ հակեցնելու համար: Շնորհիւ սակայն տեղւոյն միւտիք Մալի փաշա Ելէկի ձեռք տաւ միջոցներուն գործադուլը վարդի կեանքի մը չափ աներ է... Իրիկուն մը միայն:

Դաւիթ կնոջը հաճելի ըլլալուն բարեբաղդ, իր ներքիններուն կարծիքին յենով՝ ըստ բաղդին ընտրած էր ներկայացուած առաջին փեսացուն:

Ինչպէս որ Սթա Ապուհայիս համար կըլտար, ծերունի մըն էր որ այս նախընտրութեան առարկայ կ'ըլլար: Կամիլա գաղտուկ կը սիրէր բրնձը: Կնոջը աչքին զերուհիէ անելի բան մը երբեք եղած չըլլալով, բնաւ յաջողած չըլլալով անոր ուշադրութիւնը գրաւելու, իր երազն էր հնազանդութեամբ և համբերութեամբ միշտ կեանքին վերջը ծառայել անոր: Բնաւ քանի մը չաղճալով պալատէն դուրս, ուր զէթ ամենօրեայ կեանքը շարունակ զանի իրեն կը մտնեցներ:

Ամուսնութիւնը եկաւ բնաջնջ ընել իր երազը: Ընդունեցաւ սակայն առանց դիմողութեան մը կամ տրտնջ մը բառնալով,

## ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՏՈՆ, 24 Դեկտ. — Կոստ Հոր գրահատորը դոր Գարիի գաղթականութիւնը Անգլիոյ նուիրած էր, երկէ Գլաշտի նաւային կերտարաններէն Բարթոլոմէ հասաւ: Ժամանակիս ամենէն զօրաւոր զրահաւորն է:

ԼՈՒՏՈՆ, 24 Դեկտ. — Թագուհին թեթեւ անհանգստութենէ մը կը տառապի: Ապրիլներէն վրայ է արդէն:

ԼՈՒՏՈՆ, 24 Դեկտ. — Անգլիա Բ. Դրան ուշադրութիւնը հրաւիրած ըլլալով Պարսի պաշտօնատարներէն միոյն ձեռնարկին վրայ որ Բոլէյթ գացեր է, ստիպելու համար Սուլթանը որ Կ. Պոլիս երթայ, և զիտեղ տուած ըլլալով թէ անիկա հակառակ է անկողնութեան պայմանագրութեան, Բ. Դրանը պատասխանեց թէ տեղեկութիւն չունի այդ պաշտօնատարին կատարած ձեռնարկի մասին և թէ չի ծանշար զինքը:

ՊԷՐԼԻՆ, 24 Դեկտ. — Հէտի մեծ գործարիւն և մեծ զբոսէին ամուսնալուծութիւնը վճարուեցաւ բնաւորութեան բացարձակ անհամաձայնութեան պատճառաւ:

ԼՈՒՏՈՆ, 24 Դեկտ. — Խորհրդարանին անդամներէն Պ. Պ. Թիլլի և Օ'Տոննէլ, մէկ և երկու ամսուան բանտարկութեան դատապարտուեցան, որովհետեւ յորդորած էին իրաւասացի ագարակի վարձակալները վարձքերը չի վճարելու:

ԼՈՒՏՈՆ, 24 Դեկտ. — Ինքնուր Էլէքթրիկ Ռէյլվէյի կառավարման թիւնէն մը տակէն անցած միջոցին, շոգեշարժին մէկ քանի կտորները հայեցան: Սխալով կառավարմանը բռնկեցաւ, ճամբորդներուն մեծամասնութիւնը ազատեցաւ կուրացուցիչ մուտի մը մէջ խորհարելով: Շատեր ինկան մահացան, մինչև հիմա ետքը մեռել գտան: Պատահարին ծանրութիւնը կը վերագրուի թիւնէին մէջ եղած օղակալութեան:

ԼՈՒՏՈՆ, 25 Դեկտ. — «Թայմզ» կ'իմանայ Ս. Բէթթրօպուրկէն թէ ռուսական կառավարութիւնը լաւ գիտէ թէ Գոլէթի շէյխերը բացարձակապէս անկախ են և թէ Սնյուխ թոյլ չպիտի տայ որ Նապիլ գոտն փոխուի, և ոեւէ ուրիշ պետութիւն մը հաստատուի այդ եկրին մէջ:

ՊՈԼԷՆՈՉ ԱՅՐԷՍ, 25 Դեկտ. — Արժանի և Բիլի համաձայնեցան խորհրդակցելու իր զօրքերը կտուր դաշտէն ետ կանչելու և Անգլիոյ իրաւարարական վճիռն սպասելու:

ՊԷՐԼԻՆ, 25 Դեկտ. — Գերմանական մամուլը կը յիշատակէ յամառութիւնն ու կորովը զորս անգլիացիները ցոյց տուին

թող առաւ որ զինքը զարգարեն և հարսի զգեստներ հագցունեն երբ արարողութեան օրը եկաւ: Բայց փեսային զաւուն քանի մը վայրկեան մնացած՝ որեւէ պատրուակով մը հարսանեկան սենեակէն փախաւ, սպասաւորներուն սանդուղը հասաւ, և երեք ժամ ի զուր փնտրուելէն ետքը, իր թողբովը պարտէպին մէկ ծառէն կախուած գտան զայն՝ խաւար գիշերին մէջ:

Երբ Ժերմէն լսեց Սթա Ապուհայի անհամաստեղութեան այդ ծրագիրը պարզեց, սարսափեցաւ մնաց. կը ճանչնար իւր փորձի բարեկամութիւնը, և կը կասկածէր որ շատ կարող էր յուսահատութեան ժամու մը մէջ Կամիլային պէս ընելու: Հիմա ինչ ըսել այդ խելայեղ տղուն... Ինչպէս արգիլէր կրօնը չունեցող և բարոյականի որեւէ սկզբունքէ հեռու մեծցած այդ արարածը՝ իր

Ուկրաինայի երկաթուղիի գլխին շինութեան միջոցին: Կ'աւիտոսան իրենց անհաշուելիք որ գերմանական գաղթականութիւնները անգլիական ձեռնարկներու տակ կը գնէ: ԲՈՒՐԻՉ, 25 Դեկտ. — Ֆրանսացի աւանաւոր զորադէտ Պ. Հանրի Ֆորէի մեռաւ:

ՄՈՐՍԷՅԷ, 25 Դեկտ. — Թերթ մը կը հրատարակէ Ալիսիոյ ֆրանսական գործակատար Պ. Լակարտի հետ սնեցած տեսակցութիւնը որ իր պաշտօնին զուխը մեկնած միջոցին, յայտարարած է թէ Պ. Պ. Լակարտ, վաղեմ Ռուսօի և Տրեքի կողմէ ինքնազիր նամակներ կը տանի Նիկուսին որոնք Ալիսիոյ թագաւորը Ֆրանսա գալու կը հրաւիրեն: Պ. Լակարտ կը կարծէ թէ Մէնէլիք ապրիլին Թուրքի պիտի երթայ և թէ զիտաւոր Դաւիթը պիտի ընկերանան իրեն:

ԼԷՂԷ, 26 Դեկտ. — Նախարարապետը տեսակցութեան մը միջոցին ըսաւ թէ Անգլիոյ և Ստորին Նախանգներու միջև դիւանագիտական յարաբերութիւնները բազաբաւարական և բարեկամական են և թէ Ստորին Նախանգները պիտի պահեն իրենց չեզոք դիրքը հակառակ իր միջամտութիւնը ըստացուելու համար եղած ճիգերուն:

ԲԱՐԻՉ, 26 Դեկտ. — Ֆրանսական կառավարութիւնը հրաւիրեց Մենէլիքը Ֆրանսան այցելելու: Նիկիտը զարման կ'ըսէ պատուի:

ՊՈԼԷՆՈՉ ԱՅՐԷՍ, 26 Դեկտ. — Թէպէտեւ Արթանթին և Բիլի կնքած են համաձայնութիւն մը որ կը հետաքննէ անմիջական ռեւիտանդ, երկու կողմէ ալ պաշտպանութեան պատրաստութիւնները առաջ կը տարուին, ինչ որ փոխադարձ անվստահութեան ապացոյց է:

ՄՈՐԻՍ, 26 Դեկտ. — Սպարանին փոխառութեան առաջարկը մերժեց:

## ԾԱՌՈՒՅՑ ԿԱԶԱՌՈՍՏՆԻ

ՊԱՊ-ԷԼ-ԼՈՒՐԷՐ պողոտային վրայ, ՀԱՆՈՒՅԻՅԷԼԻՆ զիմացը, իր մասնաւոր յաճախորդները ունեցող և բանուկ նորաձեւութեան առարկաներու (ԹՊ-ՀԱՅԻՅԷԼԻՆ) խանութ մը, տիրոջը մահուան պատճառաւ, այս անգամ՝ ծախու հանուած է մէջը գտնուած աւելցող ապրանքներով և յորինուածով: Դիւրամտեցիկ պայմաններ:

Գնել փափաքողները պէտք է դիմեն առ Տիար Ռոտօլֆ Մէրճանճեան Ապտին Ամալէթթին փողոց թիւ 26:

ահուկ խորհուրդը ի գործ գնելէ առ Օրէնքին, ինչ վարձատրութեան, ինչ սիրող մասնուկ հարկադրել զայն ապրիլու, մինչև վերջը համբերելու այն ծանր բոխի զոր աշխարհի վրայ ամեն որ պարտական է կրել:

Դատարարական բոլոր քաջութիւնը ժողովեց, ու համազման հրաշքներ գործեց: Այդ սիրեցեալ ըմբոստացածին ջանաց նպարդը ինչ հանգիստեալ կեանքին մէջ արդարեւրուն խոստացուած ուրախութեան ապագան և զերգոյն հատուցումները: Ինքը բրիտանեայ, շերտ կաթոլիկ, փորձեց իր յոյն և հատաբէն մաս մը ներմուծել այդ խաւ հոգին մէջ որ բոլորովին անտեղեակ էր իր սեփական հաւատքին վերաբերեալ բաներուն: Ընդունալ ջանք. Ժերմէնի գործակալութեան խօսքերը չէին յաջողել Սթա Ապուհայի համազեղ. այդ տղուն կարծիքով, Աստուած այնչափ մեծ, այնչափ բարձր, այնչափ իրմէ վեր էր՝ որ չէր կարող հասկնալ զինքը կամ միւրթաբել:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵՅՄԱՆ



# Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ  
[ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼԱՍՏԱՑԵԱՆ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀՍՋԱՐ ՅՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դրուժնեքեր կը գործադրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցամաք եկամուտ, եւ այլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագները և ապահովագրութեան զանազան դրուժնեքերը չուսումնասիրած մի՛ ապահովագրուիք. — Առատածեռն պայմաններու Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՋԻՍ և ժ. ՎԱԼՖԻՆԸ, Ընդհ. ներկայացուցիչք:  
Աղբքանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխավոր գործակալաւ Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

## ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐՄԱՐԴԼՈՒԻ 1200,000,000 ՅՐԱՆԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ Զ ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԵ-ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական դործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Յրանալի և օտար երկրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եղիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ. ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւժամով մուտհակներ կուտայ:

## ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

### ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիւրէ, Իզմիր, Միսիլի եւ Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդրիա ամեն Շաբթի օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիւրէ:

Բէա հանգիստներ, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մալմիս և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբքանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տաւրիզինգ օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏԵՆ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԵՑՏԱ, ՈՏԼԵՆ

Ճամբորդութեանց և ապրանաջ համար դիմել Ընկերութեան Աղբքանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաեւ Գոլքի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

## ՅԱՆՋՆԱԿԱՆ-ԴՈՐԾԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՋՆԱԿԱՆՆԵՐ Ի ԳԱՀԻՐԵ

Գահիրէն և շրջակայքէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ զտնուած ամեն տեսակ զիւրքերու, ինչպէս նաեւ Համպուրի, Պրոնշտիկի վիճակահանութեանց տոմսակներու, Եղիպտոսի Գրէտի Ֆոն-սիէի, Բումբէի երկաթուղւոյ բոմբէներու, և զարձեւալ ամսավճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապագրանքները ըլլալու են կանխիկ փութի միջոցաւ: Գիւրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «գծի՛վ առա՛ւ պուրքման» վճարել այն պահուն, երբ յանձնարարութեանց զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 ղը. արժէքով յանձնարարութիւններու համար եղիպտ. 5. միլիոնոց դրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի կային ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանին:

Հասցէ՝

Garabed Erzenatzian  
Rue Abdul-Aziz

CAIRE

## Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԵ

—(—)

Մեծ վաճառատուն հանգերձեղինաց, արանց, կանանց և տղայոց համար:

Չարի վրայ զգեսներ, յաւագոյն պայմաններով:

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

## Ռ. ՈՒ ՍԱ. ԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՏԷՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԵՒ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԼՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

|                                  |                              |
|----------------------------------|------------------------------|
| ԱՆԲԸՐԷՐՈՐ ՆԻՓՈԼԱ. արդթ. թծ. 5500 | 2ԻՍԱՉՈՅ տարողութիւն թծ. 5500 |
| ԲԵՆ ՕԼԿԱ " " 5500                | 2ՍՐ " " 5500                 |

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղբքանդրիոյն դէպ ի Օտէա, հանգիստելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԶՐԻՄ ՏՈՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵՒ ԾՈՎՈՒ ՍՍԻԱԿԱՆ ԵՋԵՐՖԵՆԲԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅՈՒ ԾՈՎ:

ՇԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղբքանդրիոյն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵՆՅԱ, ՊԵՐՏՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղբքանդրիա, Թղթաւսան փողոց:

## ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խախակա՛ն Հրամանագրով  
25 Յունվար 1898

Դրամագլուխ ԱՆՂ. ոսկի 1,500,000  
Պահեստի դրամ " " 493,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր. Աղբքանդրիա, Մանսուրա, Խաբթում:

Եղիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ բաշխուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական դործողութիւններ:

## ԴՈՒԱՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՈՏԱԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լրջմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է ահեճաշէ վերջ ԲԵԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգուղեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԵԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ ուրիշ աղբքային գեղերու նման չի խանգարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

35—346

## Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷՐՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՅ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ԳԱՀԻՐԵ, — ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԿԻՆ ՋԱՊԹԻՅԷԻ ՇԷՆՔԻՆ ԴԷՄ